



Ա Գ Ա Ր Ա Տ

Թիկ թ. — Երշան ի. 1887 ՏԱՐԻ Ի. ՕԳՈՆՅԱՆ 31.

ԿՐՈՆԱԿԱՆ

ՄԱՀԱԿԻՐ ՀՅԴԻՆ ԱՍՏՈՒՇԾ ԿՑԵՍՆԻ.

ՄԻ ՄՏԵՌՈՒԹԵՒՆ ԱՊԵԽՈՏՔ.

Մասն. Ե. 8.

Ո՞վ եմ ես՝ երկրի հողի կտորս, որ գու, ով իմ Սպեղծող, արժանի ես անում ինձ տեսնել քեզ քո փառքիդ մէջն։ Առաւօտուան ոսկեփայլ լուսի մէջ տեսնում եմ ես քո երեսիդ ճառագայթը. երկինքը պատմում է Քո զօրութիւնն. երկիրու կանաչում է, մոնչում է ծովը. և ինչ որ շունչ ունի, Քեզ, Աստուծոյդ փառք է տալիս։ Եւ Ես միայն պիտի

լուէի: Երկնքի այն բարձրութիւնների մէջ ես աւելի սլարդ կըտեսնեմ Երկնաւոր Հօրս՝ պայծառացած, ու Նորա աթոռի տռաջը ծունը կըդնեմ: Ո՞վ եմ ես, որ ուզում ես ինձ Քո Երանելիների հաշուի մէջ դնել, նորանց կարգը դասել ու ինձ Փեղ զաւակ ես ընտրել:

Միլիոնաւոր մարդիկ ամեն մի առաւօտ ինձ հետ մտնում են կենաց ժամերի նոր շրջանը, հաղարաւորներն օրուայ իրիկուանը չեն հասնիլ, նորա վերջաւորութիւնը չեն տեսնիլ. կարելի է, որ ես էլ նորա ընթացքի կիսումն աշխարհիցս դուրս կը կանչուեմ; ինչու որ կը գայ վերջապէս այն անվախչելի բոլէն, որոյ մէջ իմ մահն կը տեսնեմ:

Այ ծերունի, մաղերդ ծերմակել են, օրից օր ոյժու պակասում է. դա մահուան առաջին փչումն է, որ քեզ վերայ փչում է հեռուից: Այդուն դեղնումէ ձմեռուան առաջին փչումից ծառերի տերեւը: — Ով մարդ, ով կին, առոյգ հասակի մէջ լինելով, ձեր ոյժն ու լոյսը ձեր վրան է, անթերի վայելումէք կեանքը, բայց նայեցէք ձեր ետեւը. ձեզ նմաններից հաղարաւորներ իրանց կեանքի ամառուան մէջ, իրանց գըլուխը քաշ արին ու ընկան՝ դաշտի հասած ու հնձուելու ցորենի նման՝ մահուան մանգաղի տակ: — Ով պատանի, ով ծաղկահասակ օրիորդ, դու հըճուելով վայելում ես կեանքիդ օրերը. քո կեանքիդ ընթացքը քեզ զեռ ես մի ամբողջ յաւիտենականութիւն է երեւում, որոյ ծայրը չես տեսնում: Բայց գիտես երբ է քո վերջը: Գիտես արդեօք, որ մահարեր հիւանդութեան սերմը քո կուրծքիդ մէջն արդէն ծածուկ քնած չէ: Գիտես որսլիսի աննշմարելի գիտուածներ քեզ քո կեանքի գոնիցը գուրս հանել կարող են: Անցկացած ժամանակի գերեզմանների վերայ լաւ մտիկ տուր. Նորանք ծածկում են պատանիների էլ, ծաղկահասակ օրիորդների էլ աճիւններն:

Երբ որ այդ բանը մտածում էք, աչ ու գողի մէջ էք ընկնում: Կը ցանկայիք, որ ձեր գլխիցը հանէք այդ միտքը, — Այդուն չպիտի անէք, որովհետեւ մեծ նշանակութիւն ունի այդ մտածութիւնը տմեն: մի հոգւոյ համար: Միշտ մոքնե-

բումդ սկահեցէք ձեր մահը, միշտ ձեր աչքի առաջն ունեցէք ձեր վերջն. ինչու որ իմաստուն մարդն ամեն բանի մէջ, ինչոր սկսում է, նորա վերջն է մտածում:

Ամեն մի մարդ, ամեն մի առաւօտ նոր նոր ծրագիրներ է կազմում իւր համար: Ամեն մի մարդ՝ իւր տան գործերի համար, իւր կատարելու քաղաքական գործերի համար նոր յատակագծեր է շինում: Ամեն մի մարդ նոր յոյսեր է կապում իւր համար այն բանին, որ այսօր պէտքէ անի: Ամեն մի մարդ մըտքից անց է կացնում նոր ակնկալութիւն ունենալ բարեպատեհ գիպուածներից՝ ու բարեքաղղութեան հասնել, կարելի է, օրն իրիկուն գեռ չեղած: Կարծես օրուան հենց առաջին ժամի հետ ծնումեն մեր սրտի մէջ շատ ու շատ ցանկութիւններ: Առկաւ է պատահում, որ մարդուս մոքերն այնպէս վառ կերպով գէպի առագան գնան, ինչպէս որ արեգակն սարերի քամակից՝ նոր ծնածի նման՝ կրկին գուրս է գալիս:

Եւ ինչու համար է այս ամեն բանն: Ի՞նչ են վերջապէս այս բոլոր ծրագրերն ու յոյսերն, այս բոլոր յատակագծերն ու ակնկալութիւններն այս բոլոր ցանկութիւններն ու հառացնքներն: Ուրիշ բան չեն, այլ միայն, այն, որ ամեն մի մարդ՝ իւր մոքովն ու սրտով ուզումէ յայտնել բարեպատեհնեւն համար իւր անելու գործերի նախագիծ է շինում, որ տնական կեանքը գեղեցկացնի: Սորա համար մարդուս՝ ձեռնարկութիւններ անող խելքը կրկնապատկումէ իւր ջանքն, որ աւելի բարձր պատուի հասնի, աւելի լաւ անուն ունենայ: Սորա համար ծաղիկ հասակի մէջ եղողների երևակայութիւնը մեծ մեծ երազներ է տեսնում:

Այս ցանկութիւններն եւ ակնկալութիւնները ներելի են, այս նոր ջանքն ու աշխատութիւնը՝ բարօրութիւնն աւելացնելու համար՝ գովելի է. բայց, երբ որ քո այս ցանկութիւններդ կատարուեին, բոլոր սրտովդ գոհ կրկնէիր արդէն: — Կարծում ես դու, որ քո ցանկութիւններիդ հասած կլինէիր, երբ որ այս բոլոր մէջները բարօրութեանդ համար ձեռք բերած լինէիր.

այն ժամանակ բաղդաւորութեան համար ունեցած ձեզովեսիշ
անվրդով բաղդաւորութեան ևս հառած կը ինէիր:

Աւաղ, աչ, ինքդ քեզ մի խարի՛ր: Միտքդ բեր, ինչպէս շատ
անգամ սիրող տեղը չէր լինում, երբ որ ուտելիքի համար ոչ
մի հոգս էլ չէիր ունենում. ու ինչպէս ուրախ էիր բնդհակա-
ռակն այն ժամանակն էլ, երբ որ այս ու այն բանը քեզ պակաս
էր, ինչ որ այժմ ունիս: Միտք արա, որ մի ցանկութեան կա-
տարումն՝ իրաւ է, մարդուս ուրախացնում է, բայց երբէք
երկար ժամանակ չէ քաշում այդ ուրախութիւնն, և թէ՝
ամեն անգամ, երբ որ մի փափագ լցվում է, նորա տեղը մի
ուրիշն է ծնում. մտածիր, որ քո ներքին բաւականութիւնդ
շատ անգամ բոլորովին կախում չունէր արտաքին հանգա-
մանքներից:

Եւ ի՞նչպէս կը ինէր, եթէ որ դու այսօր մի նպատակիդ հաս-
նէիր, որոյ մասին աշխատում ես. եթէ որ քո սրտիդ ամե-
նածածուկ ցանկութիւնն կատարուէր, որ՝ քեզանից ջոկ՝ ոչ
մի մարդու յայտնի չէ՝ բացի Աստուածանից — և այն ժամա-
նակ՝ քո նպատակին հասնելուդ հետ՝ մահու էլ վրա հասնէ՛ր: —
Ի՞նչ կը ինէր այն ժամանակ քո մտքումկ քեզ համար յղացած
կատարելատիպն, որին ձգտում էիր, որոյ ետևիցն էիր ընկ-
նում տարիներով՝ անհանգիստ սրտով, անդուլ և անգաղար
բաղձանքով՝ որ հասնես. — մի երաղ, մի ստուեր:

Սորա համար իմաստան մարդու նման՝ միշտ վերջը մտածիր
այն բանի, որ սկսում ես անել: — Դեռ ևս գոհ մի լինիր, որ,
քո առաւօտուան աղօթքի ժամանակ, նոր մտադրութիւններ
ես գլխումկ դրել քո արտաքին կեանքիդ համար — մտածիր քո
նէշ+ին հետեւէր վրայ էլ, քո իսկական, տեսողական բարօրու-
թեանդ համար էլ, որ առաջ է գալիս միայն քո սրտիդ գեղեց-
կութիւնից: Քէսապանէան իւր բոլոր գործերն Աստուծով պէտք
է սկսի, ինչու որ ոչ մի սսկի, ոչ մի ծիրանի, ոչ մի մեծութիւն
չէ պարզեւում մարդուս աշխարհիս վերայ այնպիսի մի անպղ-
տոր, անաղարտ, և անապական բաղդաւորութիւն, որ տալիս
է հընկ: — Լաւ իմացիր որ շատ անգամ մեծ փառքի ու անուան
տէր, մեր՝ երանի տուած մարդու օիբուն ուտում, մաշում է
որումութիւնն, իսկ հոգոր թագաւորազն իշխանի համար ան-
գամ պատրաստում է վրւշերից շինոծ անկողինք: Ըէւ նո-

բանք երկրաւոր փառք աւելի ունին քան թէ դու քեզ համար կը ցանկայիր, բայց, կարելի է, պակաս են վայելում, քան թէ դու քո ունեցած միջոցներովդ, կամ թէ քաղաքական կեանքիդ ստորին աստիճանի մէջ ունիս ու վայելում ե՞ս։ Քո ձեռքդ է ու քեզանից է կախուած մարդկային կեանքի մէջ ամենաերջանիկ լինել։ — ու կարող ես լինել։ Քո սիրով էլ այդ է պահանջում։

Քո ծածուկ արած ազօթքիդ մէջ մօտեցել ես արդեօք երկնաւոր չօրդ ու աղայել ես, որ քո միտքդ լուսաւորի, որպէս զի ձեռք բերել կարողանաս այն, ինչ որ գերագոյն բարին է երկնքումն ու երկրիս վիրայ, յաւիտենական կեանքի մէջ ու այս անցաւոր աշխարհում։ Մօտեցել ես արդեօք խոնարհ սըրտով քո վիրկչիդ, քո աստուածային Ուսուցչիդ ու հարցրել ես, ինչպէս երբեմն հարուստ երիտասարդն հարցրեց նորան։ Վարդապէտ, ի՞նչ բարի գործ անեմ, որ յաւիտենական կեանքը ժառանգեմ։

Եշտանք նորանց, որ ճառաւու աչշու ս-նէն, ինչու որ նորան+ Ա. ապո-անց էլ ուշոնէն։ — Այսպէս է պատասխանում քեզ Փէնչէր սուրբ ձայնն, և այս աստուածային խօսքերը ցոյց են տալիս այն ճանապահն, որ դու պէտք է ընտրես. ցոյց են տալի քեզ երանելի կեանքը, հոգւոյ գէրագոյն բարէն, որ դու այս ճանապարհի եռ մի ուրիշ ճանապարհի վրայ կը գտնես։

Մաքրել ես արդեօք քո խղճմտանքդ քեզ տանջող իւր ամեն յանդիմանութիւններից՝ քո արած վատ գործերիդ համար. մեռցրել ես արդեօք գիշերուան քնի հանգստութեանդ մէջ քո թշնամութիւններդ, քո անկարգ վարմունքդ, քո նախանձդ։ Ֆցել ես արդեօք քո անցկացած ժամանակի անտակ ծովը քո մեղսական ցանկութիւններդ, քո մոլի իղձերդ, քեզ անպատիւ անող սովորութիւններդ։ Ա. յժմ քո քնիցդ զարթնել ու պարկած տեղիցդ վեր ես կացել արդեօք՝ նորսգուած ու կազդուրուած՝ մի նոր ստեղծուած, աւելի լաւացած մարդու նման, որ կը համարձակի իրաւունք ունենալ մասնակից լինելու հոգիների գերագոյն երջանկութեան, որ Աստուած պարզեել կարող է իւր հարստութեան լիութիւնից։

Ինքդ քեզ քննիր։ — Մի թռչիր, քեզ քցիր անխելք մի թեթեամտութիւնովդ քո անելու օրական գործիդ մէջը, Միայնու-

թեան մի քանի ըոսկէներ գտիր, ուր ոչ մի բան չէ կարող քեզ
արգելք լինել քո վերայ մտածելուդ, ու հարցրաւ քեզ այն-
պէս, որպէս թէ այդ հարցումը քեզ եղած լինէր մեռելներին
Դատովի բերանից. Ի՞նչ դրութեան մէջ է սիրտդ։ Ի՞նչ սխա-
լանքներ կան, որ դեռ ևս կեղտոտում են նորան։ Ի՞նչ և որ
անմաքուր կրքերդ դեռ ևս արգելք են լինում քեզ, հեռա-
ցնում ու անջատում քո գերազոյն բարւոյդ հասնելուց։ Ի՞նչ
բաներ կան, որ արել ես ու այժմ սրտանց ցաւում ես ու ափ-
սոսում։ Հոգւոյ ո՞ր գեղեցիկ յատկութիւն, ո՞ր առաքինու-
թիւն դեռ ևս պակաս է քեզ, որ եթէ ունենայիր, Աստուծոյ
և մարդոց առաջ աւելի սիրելի կը լինէիր։

Սըստմ ճաշունը եղէ։ — Այս, որչափ շատ միտք կայ այս քիչ
խօսքերի մէջ։ — Դեռ ևս հերիք չէ, որ դու աչքի երեելու ոչ
մի վատ բան չես անում։ որ դու ոչ մի կոպիտ յանցանքով չես
կեղտոտում քեզ։ որ դու արքեցող՝ կամ խարերայ, մատնիչ՝
կամ զրալարտիչ, անմեղութիւնը գլխից հանող՝ կամ սուտ
երգում ուտող չես, — չէ, ոչ միայն ձեռքերդ կեղտոտուած
պիտի չլինին արիւնի՝ կամ յափշտակութեան մէջ։ Այսու էլ
մաքուր պիտի լինի։ ոչ մի վատ ճաշաճուն+ այդ սիրտը պիտի
արատաւորած չլինի մերքերով։ Մաշունը որպան եղէ։

Բայց մի երեակայիր, որ դու արդէն ունիս երջանկացնող
մաքուր սիրտ, ինչ որ դու ոչ մի մարդու գիտութեամբ վատու-
թիւն չես արել, և մինչեւ անգամ մոքումդ էլ մէկին մի վա-
տութիւն չես կամեցել։ Այս, որսլիսի ողորմելի առաքինութիւն
է այդ։ Մեռելներն էլ այդպէս բարեպաշտ են։ ինչու որ
նորանք էլ ոչ մի վատութիւն չեն անում ոչ գործով և ոչ
խօսքով։

Ոչ, դեռ ևս մաքուր սիրտ չունիս դու, քանի որ միտքդ ես
բերում թէ՝ քեզ նման մարդուն այնքան բարիք չես արել որ-
չափ որ կարող էիր անել։ Ոչ, քո սիրտդ մաքուր չէ, քանի որ
առաքինութիւն ես քարոզում, ու գործով չես կատարում։
Քո սիրտդ մաքուր չէ, քանի որ քո բան ու գործդ, բոլոր քո
ջանքդ այն ուղղութիւնը չունի, որ քո գործունէութեան շրր-
ջանի մէջ ամենի բարերարը լինիս, որոց հետ յարաբերութիւն
ունիս, և որոնց որ դու կարող էիր օգտակար լինիլ ու բարիք
անել։ Քո սիրտդ դեռ ևս մաքուր չէ, քանի որ դու միտքդ քե-

բել չես կարողանում, որ դու այսօրուանս մէջ մի մարդու մի օգտակար ծառայութիւն չես արել, մի ուրախութիւն չես պատճառել, թէև այդ արած գործդքո կողմից զոհողութեամբ էլ եղած լինէր:

Մի համազիր ինքդ քեղ, որ դու աշխարհիս մեծ Փրկչի կատարեալ աշակերտն ես, նորա համար, որ ոչ մի մարդ հրամարակական անալարկեցութեանդ համար քեղ մի յանդիմանութիւն անել չէ կարող: Զէ՞ որ արդէն շատ անգամ՝ մարդկանցից ծածուկ ու մենակ եղած ժամանակ՝ գրգռուած երեակայութիւնդ անալարկեցու պատկերներով էլցրել սիրտդ: Միաք արա, որ վատ մոքի ու վատ գործի մէջ մի շատ բարակ պատկայ միայն, որն որ կատաղած ցանկութիւնն ամեն մի փորձութեան ժամանակ՝ շատ հեշտ է քանդում: Միայն հաստատ կանոններ ունեցող կոյս սիրտն, միայն կոռուի մէջ պողպատի պէս պնդացած սիրտն Աստուած կը տեսնի:

Աստուած տեսնել: — Ոչ թէ մարմնոյ աչքով, այլ քո բոլոր հոգւովդ, քո բոլոր ներքին մարդովդ կը տեսնես ու կը զգաս դու նորան քո մէջդ, ով մաքուր մարդ: Մաքուր սրտավ եղիր, և մոլութեան վերայ արած յաղթութեանդ գիտակցութիւնն արդէն այս աշխարհիս մէջ քեղ դէնն անց կը կացնի այս կեանքիս պատահական դժբաղդութիւնների վրայով, ու մի երկինք կիջեցնի քո սրտիդ մէջ: Մաքուր սրտավ եղիր, և ամեն մի մտածմունքովդ՝ Աստուածոյ և յաւիտենական կեանքի վերայ՝ մի Աստուածային բոց կը վառ ուի ու ման կը գայ քո հոգւոյդ մէջ՝ իբրեւ մի ճառագայթ լաւագոյն աշխարհից: Եթէ որ թագաւորներն իրանց գաւազանը քո ոտիդ տակը դնէին, աշխարհն էլ ոսկու գանձեր քեղ սեպհականութիւն տար, — դու չէիր փոխիլ այդ չմնալու բանի համար քո ներքին գիտակցութեանդ երկինքը, քո սրտիդ աստուածային հանգստութիւնն, որ ստացել ես Աստուածոյ օրհնութիւնով: Աստուած Ճ Պէտնէլ: Ով քրիստոնեայ, ով Յիսուսին նուիրուած անձն, դու նորան կը տեսնես քո հոգւոյդ աչքերով, որ կը ացուին Յիսուսի քեղ տուած ուսումնիր: Մարդուս հոգին, առարինութիւնով մաքրուած՝ ու պայծառացած սուրբ կրօնավ և զգայականութեան կապերիցը արձակուած, աւելի պարզ է տեսնում, քան թէ այն հոգին որ հողեղէն մարմնոյ մէջն է ու հող դառնա-

լու բանի համար է ապրում։ Դու Յիսուսի հետքովը ման կրդաս Աստուծոյ առաջը, նորա մէջը կապրիս ու կշարժիս, և նա քիչ կերեւի ամբողջ իւր աշխարհի ամեն հրաշալիքների մէջ։ Երբ որ ձմեռուան գիշերը քո աչքիդ առաջն է հանում՝ անսահման երկնքի միլիոնաւոր աստղերն. երբ որ զարնան օրերը միլիոնաւոր ծաղիկներ քո ոտքիդ տակը փռում։ Երբ որ ամառուան մէջ օդը խառնվում է ու կայծակի բոցն երկնքի կամարն է ճեղքում։ Երբ որ աշնան մրրիկն, ահազին ձայներ հանելով, հարիւր տարուան կաղնիների միջիցն է փչում — զուայդ բնական ամենայն փոփոխութիւնների մէջ ոչ թէ աստղեր, ծաղիկներ, ոչ թէ բոց ու մրրիկ կտեսնես, ոչ, զու Աստուած կտեսնես, որ քեզ յայտնվում է ու քեզ հետ խօսել է ուղում։

Ասպասած տեսնել։ — Այս, զու նորան կտեսնես այն տեղ ուր որ մութը պատումէ մահկանացուի աչքը։ Նա իւր փառքովը կպատահի քեզ քո կեանքիդ ընթացքումն, երբ որ ուրիշ մահկանացուք շփոթուած կանգնած կմնան ու զարմացած կլինին անկեանք մի պատահմունքի հրաշալի զօրութեան վերայ, որոյ մասին իրանց խելքն, իրանց հակառակելով, կշռարուին, կմոլորուին։ Դու նորան կճանաչես քո կեանքիդ տարօրինակ խառն հանգամանքների մէջ, որ վերջապէս միշտ բաղդաւոր կերպով կպարզուին՝ զու նորան կտեսնես քո գլխիդ եկածներից գուրս գալու ճանապարհը չգտնելու բաւիզի մէջ, երբ որ նորա հայրական Զեռը ջերմ սիրով կրոնի քեզ, երբ որ իսկ ժամանակն է, որ նա քեզ հասնի ու անել դրութիւնիցդ քեզ զուրս հանի։

Երբ որ, շատ քիչ անգամ պատահող մի հանգիստաւոր ժամում երկնային օրհնութիւնը կիջնի քո մի գործիդ վերայ. Երբ որ մարդիկ, որ շատ անգամ մինչեւ քեզ ու քո անձու էլ չէին ուզում ճանաչել, թող թէ քեզ դին դնել իրանց մաքիցն անցկացնէին, երբ որ մարդիկ, ասումեմ, վերջապէս խղճահարուած, սիրոները շարժած, կճանաչեն, քեզ կխոստավանին, ու կընդունին քո արժանաւոր ւթիւնդ. Երբ որ ամենայն բարի մարդոց ուերը կընդմիջի երկարասեւ լուռներին ու կճանաչի քո ազնուամտութիւնդ, որ քանի ու քանի փորձերով անուրանալի կերպով տեսնուել ու հաստատուել է. Երբ որ այս աշխարհին վերայ քո եաւիցդ կդայ Աստուծոյ օրհնութիւնն

ամեն տեղ, ուր որ գնաս, ինչ որ անելու լինիս, այն ժամանակ՝ ովքը քրիստոնեայ, այն ժամանակ դու Աստուած կտեսնես, որ քեզ միշտ սիրում էր. Աստուած կտեսնես, որ քեզ հսմար մի յաղթանակ էր պատրաստում, որ, այս աշխարհիս վերայ քեզ փառաւորցնելով, մխիթարի. — դու Նորան կտեսնես, Նորանով աղատ շունչ կքաշես, Նորա քեզ պարզեած հոգւոյ երջանկութիւնը քո սրտիդ մէջ առատօրէն զեղուիլը կզգաս ու կիմանաս:

Դու Նորան կտեսնես նաև այն ժամանակ, երբ որ աստուածային անփոփոխելի վճիռը քեզ գեպի մութ անդուղքը, դեպի գերեզմանդ կտանի: Երբ որ անհաւատարիմ բազդիդ հետ, անհաւատարիմ բարեկամներդ էլ քեզնից իրանց երեսը շուռ կտան, երբ որ կեանքիդ ամեն մի շատ փոքրիկ ուրախութիւնն էլ քեզնից հեռու կփախչի ու քեզ ընկեր կմնայ միայն քո սրտիդ ցաւն, — այն ժամանակն էլ դու Աստուած կտեսնես: Քո արտասունքներիդ մէջը կգտնես Նորան: Քո անբաղդութիւններիդ կէս գիշերումն՝ արեգական լուսի նման՝ կլուսաւորի նա քո միտքդ՝ ու դու կհասկանաս և կխոստովանիս: «որ յաւիտեան Հաւատարիմն քեզ հաւատարիմ է: Նա քեզ ցի՛թողնիլ»:

Ասպառած գէսնէլ: — Նորա հետ Յիսուսով միացած, քո հոգիդ միշտ կսպատահի Ա.Հնու-չեւին: Նա կյայտնուի քեզ քո հոգւոյդ մէջ, երբ որ դու ջերմեռանդութիւնով լցուած սրտովդ աղօթք անելով՝ կխոնարհիս ու ծունը կդնես Նորա առաջն: Այսպէս տեսաւ Յիսուս Նորան, երբ որ Գէթսեմանիումն աղօթք անելով, մաքառում ու դէմ էր դնում իւր մարդկային ընութեանն. երբ որ նա, խաչի վերայ մեռնելու ժամանակն, աշխատաւ աշխարհի վրկութեան համար էր աղօթք անում, երբ որ նա յաղթելով մահուան ու գերեզմանին, զարմանքից սողշած աշխարհի առաջն երեւցաւ:

Աւ մի ժամանակ դու, կատարելութեանդ հասած քրիստոնեայ, աւելի սպարզ կերպով Աստուածդ կտեսնես, երբ որ, մահուանդ ժամանակ, վակուող աչքերդ այլ ևս աշխարհուանացել չեն կարողանալ, այն ժամանակ քեզ իրացուի երկինք, երբ որ մութ աշխարհօ քո առաջդ մի երազի պէս կանչետանայ: Աստուածայինն այն ժամանակ քո մէջդ բոլորովին

իւր կապերից արձակուած ու ազատ կլինի, երբ որ այն, ինչ որ քո մարդկային հողեղէն մասն է, վուլ կդայ և իրրե կըդկղանք ցած կլժափուի:

Այն ժամանակ, այն այն ժամանակ՝ ով իմ անմահ հոգի երբ որ քո կեանքիդ լաւագոյն ժամը կխփի, որ աշխարհիս վերայ մեռնել է ասվաւմ՝ ու երկնքումն՝ զտէննել—այն ժամանակ դու Աստուած կանանես աւելի փառաւոր կերպով, քան թե այս աշխարհումն կարող ես զգալ ու իմանալ:

Ես Քեզ կանսնեմ Քո անճառելի մեծ վոյելչութեանդ մէջ, ով այժմ ինձ դեռ ևս աներեռյթ Աստուած, և այն ժամանակ միայն իմ փախազս, որ կատարուած կլինի, ինձ հրճուանքով ու հիացումով կլցնի: Ես քեզ կանսնեմ, երբ որ, երկրաւոր կապերիցս արձակուելով, իբրեւ մաքուր և պարզ հոգի՝ կուերադառնամ իմ իսկական հայրենիքս, որ տեղից որ դուքս եմ եկել: Ինչու որ ես Քեղանիցն եմ առաջ գալի, յաւիտենականութեան ծոցից դուքս կանչեցիր, հանեցիր Դու ինձ հոգեռող կայծն: որ մերազառնում է զէպի բոլորովին լոյսդ:

Ես Քեզ կանսնեմ: — Ահ, որպիսի երջանկութիւն կայ արդէն այդ հրճուանքին արժանանալու յուսոյ մէջ: Այն ժամանակ կթուշեմ ես զէպի իմ գերագոյն կատարելութեանս նպատակը: տիեզերքի գաղտնիքների քողը կուերցուի իմ աչքիս առաջնու ու կլուսաւորեն ինձ ամեն կողմից, երջանկութիւններն որոց համար այս աշխարհիս վերայ այնպիսի մի բառ չկայ, որով մեզ բացատրէինք ու մի անաւն չկայ, որով հասկանայինք. Ես քեզ կանսնեմ այն ժամանակ, երբ որ ինքս էլ քո շնորհօքդ աւելի կատարելութեան հասած կլինիմ: Ես, որ քո անսահման տիեզերքի մի մասն եմ, և որ ստեղծուած եմ քո որդեգրութեանդ աւելի բարձր աստիճանին հասնելու: Որպիսի հրձուանքով քեզ երկրպագութիւն կանեմ: Երբ որ երանելիների լուսոյ թագաւորութիւնը ինձ կպատի ու պայծառացած արդարների ու անմահների և միլիոնաւոր աշխարհների երամների հետ Քեզ՝ Աստուած գովելով, ալէլուիա կասեմ բարձր ձայնով. Երբ որ երկնային՝ յաւիտենական ճանապարհն զէպի միշտ անճառելի երջանկութիւններն պարզ ու պայծառ կերպով իմ առաջս բացուած կտեսնեմ. իմ հոգւոյս ոիրելիներին: որոնք

որ ինձնից շուտ առաջ այնտեղ վերև թռան, գնացին ու Պեղ տեսա՛ն:

Բերանդ փակի՞ր, ով մարդ, քո շատ յանդուգն խելքովզ, ու ծունը դի՛ր մանկական պարզ սրտով ամենակարող Հօրդ առաջը: — Դեռ ես ասկում եմ ես այս աշխարհիս վերայ հայ դառնալու մարմնով: — Ա՛չ, ինչ էի ես մինչեւ ցայժմ: — Խնչ պէս անարժան կերպով, ինչպէս սխալանքներով լի էի ես իմ կեանքիս ամե՛ն օրերումն: Աւ ինչ եմ այժմս էլ: — Իվ Աստուած, ինչպէս կարող եմ ես համարձակ դէպի վեր Քէղ մտիկ տալ, ինչպէս կարող եմ ես գերագոյն բանին յոյս ունենալ: Միայն մաքուր սիրու ունեցողներն են, որ Քեզ կանոնեն: Ո՛չ թափանցի իմ սրտիո մէջ Քո սուրբ Հոգւոյդ զօրութիւնն, որ ես չդադարեմ ինձ մաքրելու այն ամեն բանից, ինչ որ իմ մէջս մեղքից սպաս չէ ու անկատար է, մի նոր, մի աւելի լաւ մարդ լինիմ ես իմ պանդխոռութեանս, իմ այս անցաւոր աշխարհիս մէջ անցկացնելու ժամանակաւոր կեանքիս այս օրը, մաքուր Հոգւով զնամ՝ իմ կեանքիս ճանապարհն. Երանի ինձ, երբ որ ինքս ինձ յաղթեմ ու յաղթող դուրս գամ այս աշխարհիցս երանի ինձ, երբ որ ես էլ մի օր իմ մահուանս անկողինքի մէջ՝ արած յաղթութեանս վերայ՝ ուրախ սրտով կարողանամ՝ ասել իմ սրտիս մօտիկ բարեկամներին՝ եւանչ նորանց: Այ ճակառ ոչ ունին, չնայ ոչ նորա Աստուած կունանէն:

(Թագավոր Գէլհանէլէնէց) Պրիդոր Եսլիսկսպոս Ազուփիրեանց.

ՃԱՌ ԱՍԱՑԵԱԼ ՅԱԿՈՒԻՐ ՏՕՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ

ՍՐԲՈՒՀԻՈՅ ԱՍՏՈՒԱԾԱՆԻ:

• ՄԵՐ ԲՆԱԿԻ-ՇԻ-ՆԵ ԵՐԱՆԻՒ-ՏԻ Է •

Արդեօք իսկ այս չէ՞ հասկացնում ու սորվեցնում մեզ, ով քրիստոնեայք, սուրբ եկեղեցւոյ ներկայ հանդէսը. Հէնց նոյնը չէ՞ իսկապէս հաւատացնում մեզ Աստուածամօր վերափոխումն: Եւ ճշմարիտ. երկրաւոր կեանքը քրիստոնէի կեանքի նպատակը չէ, այլ միայն ճանապարհը դէպի նպատակն: Այստեղ մենք մեր տանը չենք, այլ մեր տուն գնալու ճանապարհի վրայ ենք. այստեղ մենք ոչ թէ վայելչութիւններ ենք քաշում, այլ միայն աշխատում ենք. ոչ թէ հանգստանում ենք, այլ իբրա-